եւ դէմ եդեալ գնայր 'ի Պոլսոյս։ Լուեալ Բդեշխին զփախուստն, արձակեաց զօրականս զկնի նորա, զի կալեալ զնա 'ի ճանապարհի դարձուցեն յետս եւ դիցեն 'ի բանտի։ զինուորքն հասին առ նա 'ի լեառն Կարմելոս, և ստիպէին զնա դառնալ յետս, և նա աղաչէր զնոսա եւ յորդորական բանիւք խրատէր՝ չլինիլ պատճառ տարապարտ մահուան իւրոյ։ Իսկ զինուորքն, որք յառաջագոյն քրիստոնեայ էին յաղգէ Հաղեշայ։ դիմացեալ թողին զնա երթալ յո՛ և կամէր։ եւ առեալ պարգեւ 'ի նմանէ ոսկիս 100։ դարձան առ Բդեշխն և ասացին՝ ոչ կարացաք դտանել զնա։ Իսկ Պատրիարքն Թէոփանէ յապահով հասեալ 'ի Պոլսոյս, եւ անտի նաւեաց 'ի Կոստանդինուպոլիս, և ելեալ 'ի կայսերական ատեանն բողոք երարձ զգործոց Լատինաց։ առաջի դնելով զհրովարտակս Սուլթանաց։ և ատեանն հրամայեաց տիրել Յունաց ըստ մտաց հրովարտակաց, բովանդակ Գողգոթայի, այրին Բեթղեհէմի, եւ Պատանատեղւոյն, և վասն այսր գրեցաւ հրովարտակ ընդարձակ՝ մինչեւ տալ գրել 'ի նմա զվանօրայս այլոց քրիստոնէից։ Թէոփանէ առեալ զայն՝ դարձ արար յԵրուսաղէմ, արտաքսեաց զԼատինս 'ի Գողգոթայէ և յայրէն Բեթղեհէմի։ բայց դիմացեալ 'ի նոսա եթող կախել զիանթեղս 'ի վերայ Պատանատեղւոյն։ Իբրեւ էանց 'ի վերայ այսր ամիս իբրեւ 5։ առաքեցին Լատինք առ Վէզիրն Իսրահիմ Փաշայ քսակս դրամոց իբրեւ 16,000 դահեկան՝ և ձգեցին զնա 'ի կողմն իւրեանց։ առին 'ի թիկունս զգենպետն մեծ և զայլս 'ի նախարարաց տէրութեանն։ Եւ Վէզիրն խնդրեալ յետս էառ զհրովարտակն 'ի Պատրիարքէն Յունաց, զոր տուեալ էր Սիւլէյման Արքայն որդի Սուլթան Մուրատի, և հանեալ անտի զանունն Յունաց՝ և 'ի տեղի նորա գրեաց զանուն Լատինաց։ և եւս հաստատել զայն Արքայի ձեռագրով նորին։ Զի նախնին քո ասէ Սուլթան Սիւլէյման, Լատինաց պարգեւեաց զՍ։ Տեղիս Երուսաղէմի, և ոչ Յունաց։ և այս հրովարտակ է նորա։ հաւատաց Սուլթանն, և եւս հրաման լինել այնպէս։ ընդ որ ուրախացան յոյժ Լատինք, կարծելով թէ՝ տեւական է հրամանն։

Եւ 'ի սմին ժամանակի պատրիարքն Թէոփանէ էր 'ի Կոստանս Վալաքիոյ, իբրեւ լուաւ զգործս Լատինաց՝ խր-